Հաստատում եմ
Վայոց ձորի մարզպետարանի
Ներքին աուդիտի բաժնի պետ

Վ. Կարապետյան

ԱՈՒԴԻՏԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

28.11.2014թ.

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ.-ի թիվ 143-Ն հրամանով հաստատված կարգի, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 21.11.2014թ.-ի թիվ 121 կարգադրությունը, Վայոց ձորի մարզային ենթակայության<<Եղեգնաձորի երաժշտական դպրոց>>ՊՈԱԿ-ում անցկացվեց 2013թ.-ի մշակույթային միջոցառումների ֆինանսական աուդիտ, ներքին աուդիտի բաժնի պետ Վ.Կարապետյանի, ներքին աուդիտոր՝ Հ.Ավետիսյանի կողմից: Աուդիտի աշխատանքներին մասնակից դարձվեցին ՊՈԱԿ-ի տնօրեն Ի.Շահինյանն և հաշվապահ Ս.Մինասյանը:

Աուդիտի հիմնական ուղղությունները.

ա/ Ներկայացված հաշվետվություններում և ֆինանսական բնույթի տեղեկություններում արտահայտված տվյալների արժանահավատության ստուգում.

բ/ Ֆինանսական գործառույթների օրինականության ստուգում.

գ/ Հաշվապահական հաշվառման գրանցումներում արտացոլված տվյալների արժանահավատության ստուգում.

Ընդհանուր տվյալներ.

Աշխատանքները կատարեցին՝ Վ.Կարապետյանը, Ն.Կարապետյանն և Հ.Ավետիսյանը: ՈՒնեն բարձրագույն տնտեսագիտական կրթություն, ֆինանսական վերահսկողության փորձ, ներքին աուդիտորի երկու տարվա աշխատանքային փորձ: Ն.Կարապետյանն ունի ներքին աուդիտորի որակավորում:

Կազմակերպության կողմից իրականացվել է 5 մշակույթային միջոցառում 2368.5 հազ.դրամ ընդհանուր գումարով,համաձայն սուբսիդիայի հատկացման պայմանագրերի:Առկա են նախահաշիվները՝կազմված մարզպետարանի կրթության,մշակույթի և սպորտի վարչության կողմից/պատասխանատու ստորաբաժանում/ ,հաստատված մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի կողմից:Ըստ մշակույթային միջոցառումների առկա են ծախսերը հիմնավորող փաստաթղթերը/սցենարներ,հաշիվ-ապրանքագրեր ,դրամարկղի մուտքի և ելքի օրդերներ,միջոցառումների մասնակիցների հետ կնքված պայմանագրեր,ընդունման-հանձնման ակտեր/:

Թերություններ և խախտումներ.

Սուբսիդիայի հատկացման թվով 5 պայմանգրերում բացակայում է պայմանագրի կատարման ժամկետը: <<Լավագույն մարզական ընտանիք>> միջոցառման սուբսիդիայի հատկացման պայմանագրով նախատեսվել է հատկացնել 1000.0հազ.դրամ:Նշված գումարով միջոցառման մասնակիցների համար գնվել է միայն սպորտային հանդերձանք/իրականացվել է գույքի ձեռք բերման գործառույթ / :

Առաջարկում ենք .

ա/Կնքված պայմանագրերում ապահովել պայմանագրերի կատարման ժամկետների առկայություն:

Աուդիտորական խմբի ղեկավար՝ Վ. Կարապետյան
Խմբի անդամ Հ.Ավետիսյան

Եղեգնաձորի երաժ,դպրոցի տնօրեն՝ Ի.Շահինյան
Հաշվապահ՝ Ս.Մինասյան